

Թողիկոսն ե՛ւ յԱմթայ թղթեր գրեալ էին ի վերայ Սա-
րու պատրիկիս(*) ձեռամբ էքմէքճիողլի խօճայ Ղա-
զարին. նա մեզ ծանօթ գոլով՝ հարցեալ յինէն բան՝
արգիլեցի զթղթերն եւ ոչ ետու թոյլ յայտնել առ
ազճատումն անուան մեծութեանդ ի լիզու եւ ի սիրտ
զիտնոց եւ անզիտաց. եւ զայլն ինքեանք¹⁾ զիտաս-
ցեն, մեր կարն այսքան: Եւ զայլ ահվալ մեծութեանդ
ծանուցանէ ծեր երէցն, եւ որ ծանօթացաւ վասն քս
ԵՐԵՄԻԱՅԻՍ:

(Չեռ. Թիւ 1058, քղ. 38բ-39բ)

(Վասն մահուան որդւոյն)

Տեառն վարդապետի սրբազանի ողջունիւ . . .
յայտ լիցի:

[Զ]օրէն նախնեաց աւանդութեանց ի շարս ոճի
նամակաց՝ մոռանալով մոռացայ զառածեալս ի տաղ-
տապանաց անցից փոթորկաց²⁾ Քուրթունայից հակա-
կայից. եւ զի՛նչ արացէ խղճութիւն տկար բնութեանս
միում անձին այնքան խռովութեանց: Ըստ Յորայն
կողկողիմ ի ծերութեանս, եւ զի նա զյոյս իւր պըն-
դեալ տեւէր ասելովն՝ Կարող ես զիս վերստին նորո-
գել. եւ ես այնմ զի՛նչ ասացից քան թէ նկատումն
սպասելս յոփ ի տապանի եւ ոչ այլ ինչ մեղմանա-
լով ի լռութեանցս: Զի երկին եւ երկիր եթէ ի բար-

1) ինքեան.

2) փոթորակաց.

(*) Մատթէոս Կեսարացի Սարբ, պատրիարք Կ. Պոլսոյ,
1692-1694 (1694-1701 կաթողիկոս Սոոյ): Ծ. 2.